# Տեղեկատվություն «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության միջև համագործակցության մասին

2023-2025 թվականների ընթացքում «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության միջև եղել է սերտ համագործակցություն:

**«ՍՕՍ-Մանկական Գյուղ Իջևան»**

«ՍՕՍ-Մանկական Գյուղ Իջևան»-ը ակտիվ համագործակցում է Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի հետ:

Ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի հետ համագործակցության արդյունքում տարեկան երկու անգամ կազմակերպվել է «Վարքի կարգավորման իրավական հիմքերը» խորագրով դասընթացների շարք հետևյալ թեմաներով՝

- Հասարակական վայրերում հասարակական կարգի, քաղաքացիների անդորրի խախտում, փողոցային բառապաշար
- Վնասակար սովորույթներ (ալկոհոլ, ծխախոտ) իրավական պատժամիջոցներ
- Վնասակար սովորույթներ (թմրամիջոցների օգտագործում, տարածում) իրավական պատժամիջոցներ
- Սոցիալական ցանցերի վտանգավորությունը, անչափահասների թրաֆիքինգ
- Ագրեսիա տարածող համակարգչային խաղերի վնասակար ազդեցությունը անչափահասների վարքի վրա

Տարեկան առնվազն 2 անգամ կազմակերպվել են ցանցային հանդիպումներ երեխաների պաշտպանության ոլորտի հետ առնչվող կառույցների ներկայացուցիչների հետ, այդ թվում ոստիկանության, որոնց ընթացքում կայացվել են երեխայի լավագույն շահից բխող համատեղ որոշումներ:

Պարբերաբար Տավուշի մարզի Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան և Իջևան համայնքների շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների/ անդամների, այդ թվում ոստիկանության համար կազմակերպվում են Գենդերային հավասարության վերաբերյալ դասընթացներ, որոնց մասնակցում են նաև անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման խմբի մասնագետները:

Կազմակերպվել է դասընթաց «Երեխայի անվտանգության պաշտպանություն» թեմայով, որին մասնակցել են նաև ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման խմբի մասնագետները:

Համայնքի շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների/անդամների, այդ թվում ոստիկանության համար կազմակերպվել են երեխաների բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ դասընթաց:

Համայնքի շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների/անդամների, այդ թվում ոստիկանության համար կազմակերպվել են սեմինար/քննարկումներ, որոնք ուղղված էին կյանքի դժվար իրավիճակում հայտնված ընտանիքների վաղ հայտնաբերմանը, ինչպես նաև նրանց աջակցման գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու զարգացմանը, ԿԴԻՀ երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների կարիքների ժամանակին և արդյունավետ լուծմանը:

«Կարճաժամկետ խնամք» ծրագիր նոր երեխաների ընդունելության ժամանակ հաճախ լինում են ուղղորդումներ ոստիկանությունից: Երեխայի կենսաբանական ծնողի կողմից մանկական գյուղի տարածքում միայնակ թողնելու և հեռանալու դեպքի ժամանակ հրավիրվել են ներկայացուցիչներ ոստիկանությունից:

«ՍՕՍ-Մանկական Գյուղ Իջևան» ընդունվող նոր երեխաների հաշվառումը, նրանց անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման /ծննդյան վկայականների սոց. քարտերի վերականգնում, անձնագրերի տրամադրում/ գործընթացը կատարվում է սահուն:

Համագործակցելով ոստիկանության Իջևանի բաժնի անչափահասների գործերով մասնագետների հետ կարգավորվել են «Կարճաժամկետ խնամք» ծրագրի երեխաների կենսաբանական ընտանիքներում առաջացած խնդիրները:

Պարբերաբար համագործակցություն է լինում ծրագրում խնամք և դաստիարակություն ստացող երեխաների կենսաբանական ընտանիքում առաջացող խնդիրների լուծման ուղղությամբ /մտահոգություններ ենք հայտնել ծրագրի մասնակից երեխայի կենսաբանական ընտանիք այցելության ընթացքում հանրավոր բռնության դեպքի վերաբերյալ, հաղորդում է ներկայացվել նախկինում կենսաբանական ընտանիքում կատարված հնարավոր բռնության դեպքի վերաբերյալ և այլն/:

Երեխաներին այլ հաստատություն ուղեգրելու դեպքում երեխային ուղեկցող կազմում ներգրավվել է նաև ոստիկանության Իջևանի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման խումբը:

Ոստիկանության Տավուշի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման խմբի տեսուչները մասնակցել են աշխատաժողովի, որը վերաբերում էր «Ուժեղ ընտանիքներ և համայնքներ՝ Տավուշի մարզում երեխաների զարգացման համար» ծրագրի գործունեության ընթացքում քաղած դասերի, պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցության ընթացքում ձեռք բերված լավ պրակտիկայի մասին:

**«ՍՕՍ-Մանկական Գյուղ Կոտայք»**

«ՍՕՍ-Մանկական Գյուղ Կոտայք»-ը ակտիվ համագործակցում է Կոտայքի մարզի ոստիկանության, դատախազության և Կոտայքի մարզային փրկարար ծառայության հետ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժինը սաների հետ իրականացնում է պրոֆիլակտիկ կանխարգելիչ բնույթի զրույցներ, ինչպես նաև իրավագիտակցության բարձրացման նպատակով հանդիպումներ: Անհրաժեշտության դեպքում ուղղորդում ընտանիքների:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարականի համաձայն՝ Կոտայքի դատախազության հետ համատեղ կազմակերպվել են շրջայցեր, տեղի են ունեցել հանդիպումներ մանկական գյուղի անչափաս երեխաների հետ՝ նրանց իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու, հանցագործությունները նախականխելու և նվազեցնելու անչափահասների շրջանում հանցագործության մակարդակի աճը:

Կոտայքի մարզային փրկարար ծառայության աշխատակիցները պարբերաբար այցելում են մանկական գյուղ՝ նպատակ ունենալով իրազեկել աշխատակիցներին և երեխաներին արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության, առաջին օգնության և վարվելակերպի կանոնների մասին, տարածքի անվտանգության և հակահրդեհային պաշտպանության վերաբերյալ քննարկումներ իրականացնելու, ինչպես նաև այլ արտակարգ իրավիճակներում աշխատակիցների և սաների գործողությունների վերաբերյալ գիտելիքների բերալավման նպատակով:

Ամենօրյա ռեժիմով տեղեկատվություն է տրամադրվում մանկական գյուղի տարածքում իրավիճակի և մարդկային թվի վերաբերյալ:

**«Երևան» մասնաճյուղ**

«Երևան» մասնաճյուղի համագործակցությունը ոստիկանության հետ հիմնականում տեղի է ունենում ԽՀՀ-ների, ինչպես նաև Միասնական սոցիալական ծառայության ՏԿ-ների սոցիալական համագործակցության շրջանակներում գործող Համակարգող խորհուրդներում մասնաճյուղի ներկայացուցիչների ներգրավվածության միջոցով. այս հանձնաժողովներում ներգրավված են նաև համայնքային ոստիկանության ներկայացուցիչներ: Հիմնահարցերը կապված են բռնության ենթարկված, կրթությունից դուրս մնացած և մուրացկանությամբ զբաղվող երեխաների հետ:

Համագործակցությունը նաև իրականացվում է փոխանցվող դեպքերի շրջանակներում. մասնավորապես ոստիկանության կողմից  ստացված գրությունների միջոցով:

Անհրաժեշտության դեպքում ոստիկանությունը ներգրավվում է տնայցեր իրականացնելիս: